ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.07.2019
342-66

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2019 թվականի հուլիսի 11-ին Ձեր անունով ուղարկել էր տեղեկատվություն ստանալու հարցում, որին ի պատասխան Քաղաքապետարանի տեղեկտվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը 2019 թվականի հուլիսի 11-ին էլեկտրոնային գրություն է ուղարկել՝ մերժելով տրամադրել պանջվող տեղեկությունը: Վարչությունը որպես մերժման հիմք նշում է տեղեկատվության ազատության ոլորտը կարագավորող օրենսդրությունը և մեջբերում. «Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տրամադրել այն տեղեկությունները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով ստացվել և ձևավորվել են Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններում վերջիններիս կողմից Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում»:

Այնինչ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցումով դիմել էր ոչ թե Երևանի քաղաքապետարան, այլ անձամբ Ձեզ՝ Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին: Դուք պաշտոնատար անձ եք, հետևաբար նաև տեղեկատվություն տնօրինող՝ ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի:

Ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք չենք ստացել հարցումով պահանջվող տեղեկությունները, Ձեզ ենք դիմում նույն հարցադրումներով.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ո՞ւնեք արդյոք երկքաղաքացիություն:

2. Քաղաքապետի պաշտոնը ստանձնելուց հետո հրաժարվե՞լ եք արդյոք Չեխիայի Հանրապետության քաղաքացիությունից։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝ ԻԱԿ նախագահ

Շուշան Դոյդոյան